

Սարգսի զօրավարին. ի թագաւորութեան Շահապասին. ի առաջնորդութեան Պարոն Նազարին:»

1628 Ապրիլ 10—ին Թովմաս Հէրպէրդ Անգլիական դեսպանութեան հետ հասաւ Սպահանէն վեց մղոն հարաւ գտնուող Սպահանէզ գիւղը: «Քաղաքին մղոն մը աւելի մերձ, Վէզիրը, Սպահանի Սուլթանը, Մէլիօմ Պէկ, եւ Սօջայ Նազար, Հայ իշխանը, չորս հազար ձիւորներու եւ անհասիւ հետեւակներու շքախումբով մը, մեզ դիմաւորելու եկան: Խճուղին քաղաքէն երկու մղոն հեռաւորութեամբ լեցուած էր մարդոցմով, կիներով եւ երախաներով, մենք հոս հանդիպեցանք նաեւ Պանիաներու (Հնդիկ վաճառականներ) մեծ բազմութեամբ, եւ ճամբուն բոլոր տեւողութեան խմբական բարի գալուստ մաղթուեցանք 'Սօջ Կելտին, Սէֆա Կէօրտում' բացազանչութիւններով, ընկերակցութեամբ թմբիկների, սըրբինդներու, ձեռաթմբուկներու, ցնցղաներու, պարուհիներու, ձեռնածուկերու եւ ուրիշ խաղարկուներու որոնք մոռցած եմ այժմ, որոնք այս երկրին սովորութեանց համաձայն կը ճոխացնեն հիւրամեծարութիւնը: Կա-

ւանեալ էր արքայ ընդ տօնախմբութիւնն. եւ գլխացեալ ի վերայ Մովսէսի՝ որ եւ հարցումն եւս արարեալ էր թագաւորն յազազս վարդապետին՝ ընդ Սօջայ Նազարին, եւ նա զբանս բարիս եւ յոյովս խօսեցեալ էր վասն Մովսէսի առաջի թագաւորին:»

«Իսկ զինի աւուրց ասաց արքայ ընդ Սօջայ Նազարին. զի՞նչ խնդիր ունի վարդապետն ձեր զի կատարեցուք, զզա՞նձ թէ զզատակերտ, թէ այլ ինչ, զոր ինքն կամի. պատասխանեալ էր Սօջայ Նազարն՝ թէ սա այնպիսի այր է, որ զարխարհաւ եւ զընչիւք նորին զանց արարեալ է՝ եւ բնաւ մի ոք ի դոցանէ ոչ է կարիք սորա. այլ թէ շնորհ առնես տալ սմա զպարզեւս, զլուսարարութիւնն. էջմիածնի տուր. զի անդ սպասաւորելով եկեղեցոյն այնմիկ աղօթեցէ վասն կենաց թագաւորին: Յորոյ ինչդիր յոյժ հաճեալ եւ հաւանեալ էր արքայ. եւ տուեալ էր Մովսէսի զլուսարարութիւնն սուրբ էջմիածնի թագաւորական նոճոսիւ:» (էջ 301-303)

մուրջն ալ որուն վրայէն քաղաք մտանք նոյնպէս խճողուած էր երկու կողմը շարուած կիներով, որոնցմէ շատեր տեսնելու չափ տեսնուելու ցանկութեամբ շնորհալի կերպով երեսին բացած էին: Առաջին վայրը որ կանգ առինք Մէլիտանին արեւմտեան կողմը թագաւորին բընակարանն էր Սանա-ի-բատշահ կոչուած, ուր կարգ մը ազնուականներ ծնկաչոք երեք անգամ համբուրելով ողջոյնեցին արքունի շէմքը, եւ նոյնքան անգամներ ալ իրենց զլուխները զարկին սովորական հնազանդութեամբ: Սըր Ռոպէրդ Շէրլի (որ լաւ ծանօթ էր այս կողմերու սովորութեանց, եւ ամէն կողմ Պարսիկի մը պէս հագուած կը չըջէր) նոյնպէս երկրպագեց, որ իր մասին համարում աւելցուց:» 30)

1628 Ապրիլ 15—ին կը գրէ Հէրպէրդ. «Սօջայ Նազար, Հայ իշխանը, Ջուղայի մէջ իր տանը ընդունեց այցելութիւնը (Անգլիական) դեսպանին: (Սօջայ Նազար) ինքզինքը քրիստոնեայ կը դաւանի, սակայն (ես պէտք է համարձակիմ բնել) իր տունը կահաւորուած էր այնպիսի հրէշային նկարներով, այնպիսի տըղեղ կերպերով, որոնք իրաւ որ արժանի չեն յիշուելու: Մեր ճաշի միջոցին ամենէն շատ իմ ուշադրութիւնս գրաւեց խորովեալ խոզ մը, որ առաջինն էր իր տեսակին մէջ, որ Պարսկաստանի մէջ տեսած էինք, եւ որուն միտը հաւասարապէս թէ՛ Հրեային եւ թէ՛ Մահմետականին խորշիկ է: Իր (Սօջայ Նազարի) տան բաժակները ու դաւաթները բոլորովին ոսկիէ էին, բուրումնաւէտ քաղցր ջուրի սրուակներ, եւ Շիրազի զինի ապակէբաժակներ պարպուեցան մեր աւելի լաւ հիւրամեծարութեան համար:» (Անդ)

Հէրպէրդ այլուր կը ծանօթագրէ. «Ջուղան (Նոր) կը կառավարուի մասնաւոր գլխաւոր-դատաւորով մը, Հայ քրիստոնեայ իշխան մը (ինչպէս որ զայն կը կոչեն), Սօջայ Նազար անուամբ (թէ եւ զբաղմամբ վաճառական մը), անոնց (Հայոց) վերադիտողութեան պաշտօնով:» 31)

Հէրպէրթի՝ Սօջայ Նազարի տան եւ ապ-

30) Thomas Herbert. Travels in Pessia.— 1929, New York, էջ 121-122:

31) Անդ՝ էջ 137: